

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԿԱՐՆԵՑԻՆԵՐԻ

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

1917

ԿԱՐԻՆ

Տպ. «ՍԼ.ՕՎ.Օ», Գիմնազիչևկայեա № 1  
ԹՈՒՖԻՒՄ

ԹՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԿԱՐՆԵՑԻՆԵՐԻ

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

13455

1917



Տար. ՇԹԸ. 01. Գիւմարիչ կայեցած թիմագիշէսկայեա № 1  
ԹԻՖԼԻՍ

## ԵՐԿՈՒ ԽԾԱԳ

Հայրենակիցներ,

Համաշխարհային այս սկ օրերին, երկրում վերապրող մի խումբ կարնեցիներս, կառչելով մեր աւերակներին, միտք յդացանք կազմելու «Հայրենակցական Միութիւն», յոյս ունենալով որ խտացնելով միութեան շարքերը կաւելացնենք նաև նիւթական և բարոյական միջոցները և հընարաւորութիւն կունենանք թեթևացնելու մեր տարեգիր և վերապարձող դժբախտ հայրենակից ներու ծով կարիքնեցր:

Մի մոռանաք հայրենակիցներ, որ ներկայ սկ օրերին և վաղաւայ շինարարական շրջանում, միայն միութիւններն են որ պիտի նպաստեն մեր վաղեմի իգէալներին և հայրենիքի վերաշինութեան գործին:

Յիշենք մեր սիրելիներին և հայրենակիցներին որոնք տարագիր և թշւաս վիճակով դեռ ապրում են Արարիայում և այլ վայրերում սովոր և գերութեան ճիրաններում, այն յոյսերով՝ որ մի գեղեցիկ օր իրենց սիրելիների և հայրենակիցների կողմէ հրաշալի ձեռք մը հասնի իրենց օգնութեան:

Յիշենք և չմոռանանք նրանց, աշխատելով բարոյական պարտք համարել կազմելու միութեանս մասնաճիւղեր երկրից դուրս ապրող բոլոր հայրենակիցներու շրջանում, աւելացնելու այն միջոցները որոնցմով պիտի կարողանանք օգնելու մեր բեկորներին:

Կալնեցիների հայրենակց. Միութիւն

# ԾՐԱԳԻՐ

## ՄԱՍՆ Ա. ՆՊԱՏԱԿ

1.— Միութեան նպատակն է օգնել նիւթապէս և բարոյապէս բոլոր տարագիր և վերադառնել հայրենակիցներուն:

2.— Պաշտպանել և հետազնդել տեղական ժողովրդի նիւթական և բարոյական շահերը:

3.— Աշխատել համար եղած սիջոցներով տեղեկութիւններ հաւաքել տեղահանած հայրենակիցներու տեղի և դրութեան մասին:

4.— Վերադառնել նրանց և հաստատել հայրենիքում:

5.— Ունենալ մի ներկայացուցիչ պատերազմի բեմին մօտ, որը զործելու է նման միութեանների և հիմնարկութիւնների հետ, միութեան վարչութեան հրահանգների համաձայն:

6.— Հաւաքել բոլոր կարնեցի որբերին, բանալ միութեան անունով առանձին որբանոց և տալ նրանց գոնէ տարբական կրթութիւն:

7. Աշխատել ձեռք բերել այն բոլոր փաստերը և նիւթերը, որոնք կը վերաբերին տեղահանւած հայութեան, մասնաւորապէս կարնեցիներուն:

8.— Նիւթական միջոցները ներած պարագային բանալ արհեստանոցներ, մասնաւորապէս կահանանց համար:

9.— Կազմել միութեան մասնածիւղեր կովկասում և արտասահմանում:

10.— Տեղեակ պահել միութեան շրջանից դուրս ապրող հայրենակիցներուն, երկրի գրութեան և վերագարձող հայրենակիցներու մասին:

## ՄԱՍՆ Բ. ՄԻՋՈՑՆԵՐ

Միութիւնը վերայիշեալ նպատակները իրագործելու համար ունի հետեւեալ միջոցները:

1.— Պարտագիր անդամավճար.

2.— Պատւանդամավճար.

3.— Ազատ նուէլներ:

## ԿԱՆՈՆԱԳԻՐ

## ՄԱՍՆ Ա.

1.— Միութեան անդամակցել կարող են, ընտրելու և ընտրւելու իրաւունքով 18 տարեկանէն վեր եղող բոլոր հայրենակիցները առանց սեսի խորութեան, որոնք կը վճարեն պարտագիր անդամավճար ամսական առնւազն մէկ (1) ը.:

2.— Պատւոյ անդամ կարձանագրեան այն անդամները, որոնք բացի պարտագիր անդամավճար, կը վճարեն նաև միանւաղ հինգ հարիւր (500) ըուբլի:

## ՄԱՍՆ Բ.

### ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

- 1.— Ընդհանուր ժողով.
  - 2.— Վարչութիւն.
  - 3.— Քննիչ յանձնախումբ.
  - 4.— Միութեան կնիքը (Կարնեցիների Հայրենակցական Միութիւն) մակագրով:
- 

## ՄԱՍՆ Գ.

### ԵՆԴԱԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

- 1.— Ընդհանուր ժողովները կը գումարւեն երեք ամիսը մի անգամ վարչութեան հրաւերով:
- 2.— Միութեան քանակնենդ (25) անդամները միասին իրաւունք ունին առաջարկելու վարչութեանը, արտակարգ ընդհ. ժողով գումարելու:
- 3.— Անոնք որ երեք ամիս շարունակ չեն վճարեր իրենց անդամավճարները, զրկում են ձայնի իրաւունքից:

4.— Ընդհանուր ժողովը կը նախարէ իր նախագահը ամեն ժողովի համար առանձին, իսկ քարտուղարը վեց ամիս ժամանակով:

5.— Ընդհանուր ժողովը կը նախարէ քառանգամ ընտրական ձևով իր վարչութիւնը, ինը հոգուց բաղկացած ինչպէս նաև քննիչ յանձնախումբը հինգ հոգուց բաղկացած:

6.— Ծրագրի և կանոնագրի փոփոխութեան իրաւունքը վերապահում է միութեան ընդհանուր ժողովին:

## ՄԱՍՆ Դ.

### ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

- 1.— Վարչութիւնը ունի իր մշտական նախագահը, քարտուղարը և գանձապահը:
- 2.— Վարչութիւնը կը գանձէ միութեան անդամավճարները, տալով անդամներին կնքուած և նախագահ գանձապահի ստորագրութեամբ ստացական, արցանագրելով միաժամանակ ժապաւինեալ տոմարին մէջ:

3.— Վարչութեան հերթական ժողովները կը գումարին շաբաթը երկու անգամ:

4.— Վարչութիւնը կը թղթակցի միութեան մասնաձիւղերու հետ, տեղեակ պահելով միութեան նիւթական և բարոյական գործունէութեան մասին:

5.— Վարչութիւնը կը կատարէ նաև տեղեկատու բիւրօյի գերը, մասնաւորապէս կարնեցիներու համար, և կամ առանձին բիւրո կը կազմէ իր նախաձեռնութեամբ:

6.— Ընդհանուր ժողովը իրաւունք է տալիս վարչութեանը, հրաւիրելու իր ժողովներին ոչ աւել քան 3 հոգի, ձայնի իրաւունքով, որոնք օգտակար կը նկատեն միութեան գործունէութեան:

7.— Վարչութիւնը պիտի ունենայ արձանագրութեան և հաշիւների մատեանները, (վերջինը ժապաւինեալ):

8.— Նպաստները պիտի տրւեն կամ ուղարկեն վարչութեան ժողովի որոշմամբ և նախագահի ու քարտուղարի ստորագրութեամբ:

9.—Առանց վարչութեան նախագահի և  
քարտուղարի ստորագրութեան, գանձապահը ի  
բաւունք չունի միութեան գրամմերը ծախսելու:

## ՄԱՍՆ Ե.

### ՔՆԻՉ ՅԱԽԱԽՈՒՄԲ

1.—Քնիչ մասնախումբը կը քննէ և կը  
վաւերացնէ միութեան բոլոր հաշիւները:

2.—Քնիչ մասնախումբը իրաւունք ունի  
ամեն ժամանակ տեսնելու վարչութեան հաշվէ-  
մատեանները և իր դիմոգութիւնները անելու:

3.—Քնիչ մասնախումբի կողմից չը վա-  
ւերացւած հաշիւները օրինական չեն համարւիր:

4.—Քնիչ մասնախումբը վարչութեան  
հետ միասին պարտաւոր են ամեն երեք ամիսը  
կանոնաւոր հաշիւ ներկայացնելու ընդհանուր  
ժողովին:

5.—Քնիչ մասնախումբի և վարչութեան  
մէջ պատահած թիւրիմացութիւնները կը քննեն  
ընդհանուր ժողովում:

## ՄԱՍՆ Զ.

### ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԼՈՒՄՈՒՄԸ

1.—Միութիւնը գոյութիւն ունենալէ կը  
դադրի միայն այն ժամանակ, երբ միութեան  
անդամների թիւը տասը (10) հոգի կը մնայ:

2.—Միութեան լուծման պարագային ամ-  
բողջ ունեցածքը կը մնայ Կարնոյ ազգային իշ-  
խանութեան:

Գ U. Զ.

№ 13755

ԳԻՆ 30 ԿՈՊ.